

ՎՊՀ հենակետային վարժարան 2018-2019 ուսումնական տարում ընդունվել են 150 աշակերտ: Ներկայումս վարժարանն ունի 428 աշակերտ: Զգալի աշխատանքներ են տարվել վարժարանում ուսուցման որակի բարձրացման ուղղությամբ: Այս գործին էականորեն նպաստել է այն հանգամանքը, որ համալսարանի դասախոսները տարիներ շարունակ դասավանդում են հենակետային վարժարանում: Բացառությամբ միմյանց մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների, բոլորն անցել են ատեստացիա, 11 ուսուցիչ՝ երկրորդ անգամ: Ներկայումս վարժարանի յոթ ուսուցիչներ ունեն ուսուցչի որակավորման առաջին տարակարգ: Տարակարգ ստանալու գործընթացը կրում է շարունակական բնույթ, ատեստացիա անցած մի շարք ուսուցիչներ պատրաստվում են ներկայացնել ուսուցչի որակավորման առաջին տարակարգի համար անհրաժեշտ փաստաթղթեր: Վարժարանի մաթեմատիկայի բոլոր ուսուցչուհիները և հասարակագիտության մեկ ուսուցչուհի անցել են ,Ֆինանսական կրթությունն նոր ներդրվող առարկայի վերապատրաստման երկշաբաթյա դասընթաց:

Այս ուսումնական տարում հենակետային վարժարանում աշխատում են գիտության 6 թեկնածուներ:

Ուսուցման որակի բարձրացման նպատակով շարունակվում է համագործակցությունը համալսարանի ամբիոնների հետ, մասնավորապես սերտ կապեր ունենք ,Փիլիսոփայության և քաղաքագիտության, ,Պատմության, ,Ինֆորմատիկայի, ,ՄԴՄԵ և ,Ֆիզիկայի ամբիոնների հետ: Հնարավորություն ունենք օգտագործել համալսարանի բոլոր լաբորատորիաները և համակարգչային լսարանները: Այս ուսումնական տարում վարժարանը ձեռք է բերել նոր կահույք. 280 հատ աշակերտական սեղաններ, 11 հատ համակարգչային սեղաններ, 11 հատ աթոռ և պահարան:

Անցած ուսումնական տարին վարժարանի 17 աշակերտներ ուսումնական տարին ամփոփել են գերազանց, 137-ը՝ հարվածային առաջադիմությամբ: Այս տարի վարժարանի 92 աշակերտներ մասնակցել են առարկայական օլիմպիադաների քաղաքային փուլին, որոնցից 11-ն անցել են մարզային փուլ: Մարզային փուլը հաղթահարած աշակերտից 2-ն անցել են հանրապետական փուլ: Վարժարանի հարյուրից ավել աշակերտները ակտիվորեն մասնակցել են ՎՊՀ-ում կազմակերպված օլիմպիադաների, ասմունքի մրցույթին: Մեր աշակերտները ակտիվորեն մասնակցել են

,ԱՅԲԵ հիմնադրամի կազմակերպած, ,Մեղուե, ,Կենգուրուե և ,Ռուսական արջուկե մրցույթներին և նվաճել տարբեր մրցանակներ:

Վարժարանի 84 շրջանավարտներից 78-ն ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն:

Վարժարանում գործում է ,Բանավեճի ակումբե, որը ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքային և մարզային մրցումներին: Վարժարանի սաները մասնակցել են ,Եվրոպական ֆորումիե՝ հանրապետական փուլին: Մեր սաներից Մհեր Հարությունյանն իրավունք է ստացել մեկնելու Հոլանդիա՝ մասնակցելու Աշակերտական խորհրդարանի աշխատանքներին: Հումանիտար հոսքի աշակերտուհի Էվելինա Խաչատուրովան Մոսկվայում մասնակցել է ԱՊՀ երկրների սովորողների ռուսաց լեզվի օլիմպիադային, գրավելով մրցանակային տեղ: Վարժարանում մեծ շուքով նշվել է Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության հիմնադրման 100-ամյակի տոնակատարությունները:

Վարժարանում կազմակերպվել են Մեդիագրագիտության դասեր և հակակոռուպցիոն դաստիարակությանը նվիրված միջոցառում:

Հետևողական աշխատանքներ ենք կատարում ռազմա-հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ:

Վարժարանի աշակերտները որոշակի ձեռքբերումների են հասել նաև սպորտային բանագավառում. մեր սաներից Վախթանգ Հարությունյանը դարձել է բռնցքամարտի Եվրոպայի չեմպիոն, ստացել է սպորտի վարպետի կոչում, ընդգրկվել մեր մարզի 10 լավագույն մարզիկների ցանկում: Մեր սովորողները մասնակցել են շախմատի աշակերտական առաջնությանը, Վանաձորի ավագանու ֆուտբոլի գավաթի առաջնությանը, Վանաձորի վոլեյբոլի առաջնությունում գրավել ենք երկրորդ տեղը,:

Հենակետային վարժարանի տնօրեն՝

Ս. Աղաջանյան